



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ (0322)4-61-92  
Fax /0322/ 2-07-70

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2020թ.

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի  
«Հետք» թերթի լրագրող  
Գրիշա Բալասանյանին

Ի պատասխան 2եր 14.12.2020թ-ի հարցման

Հարգելի պարոն Բալասանյան

Ձեզ եմ տրամադրում Արցախի հանրապետությունից Լոռու մարզ տարհանված ընտանիքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ հարցման:

1. Լոռու մարզում Արցախից տարհանված ընտանիքների թիվը փաստացի հաշվառվելով եղել է 1032 ընտանիք և 3315 անձ: Պատերազմի ավարտից հետո, հաշվի առնելով վերադարձի հնարավորությունը, ներկա պահին մարզում բնակվում են 462 ընտանիք, 1645 անձ, որից  
Վանաձոր քաղաք – 257 ընտանիք, 952 անձ  
Գուգարքի տարածաշրջան – 35 ընտանիք, 149 անձ  
Տաշիրի տարածաշրջան – 39 ընտանիք, 95 անձ  
Սպիտակի տարածաշրջան – 55 ընտանիք, 200 անձ  
Թումանյանի տարածաշրջան – 39 ընտանիք, 127 անձ  
Ստեփանավանի տարածաշրջան – 37 ընտանիք, 122 անձ
2. Արցախի հանրապետության բոլոր համայնքներից Լոռու մարզում կան տարհանված ընտանիքներ, որոնց բաշխվածությունը ըստ համայնքների առաջարկում ենք ստանալ Միգրացիոն ծառայությունից:
3. Պատերազմի առաջին իսկ օրվանից արցախցի տարհանված ընտանիքների գերակշիռ մասը բնակեցվել է առանձին բնակարաններում և տներում: Մի մասը ժամանակավորապես հյուրընկալվել են Լոռու մարզի հյուրանոցներում, հյուրատներում, պետական ընդհանուր կացարաններում՝ թվով 20 ընդհանուր կացարան: Ներկա պահին ունենք բնակեցված միայն չորս ընդհանուր կացարան՝

Վանաձորի մանկատուն – 19 ընտանիք, 62 անձ  
Վանաձորի աջակցման կենտրոն – 3 ընտանիք, 9 անձ  
Վանաձորի «J& S» հյուրանոց – 2 ընտանիք, 19 անձ  
Ստեփանավանի «Գրիգ Հաուս» հյուրատուն – 7 ընտանիք, 35 անձ

*Առանձին բնակարաններում ապրողների թիվը ըստ տարածաշրջանների՝*

Վանաձոր քաղաք – 233 ընտանիք, 862 անձ  
Գուգարքի տարածաշրջան – 35 ընտանիք, 149 անձ  
Տաշիրի տարածաշրջան – 39 ընտանիք, 95 անձ  
Սպիտակի տարածաշրջան – 55 ընտանիք, 200 անձ  
Թումանյանի տարածաշրջան – 39 ընտանիք, 127 անձ  
Ստեփանավանի տարածաշրջան – 30 ընտանիք, 87անձ

4. Համայնքային ենթակայության տարածքներում բնակեցված արցախցիների ծախսերը հոգում են տարբեր կառույցներ: Մինչ օրս պետական ընդհանուր 2 կացարանների և հյուրանոց-հյուրատների կոմունալ ծախսերը փակվել են պետության կողմից: Մանկապարտեզի, հիգիենիկ և անկողնային պարագաների, հագուստի և կոշիկի, սոցիալ-հոգեբանական, առողջապահական և այլ տարբեր կարիքներ փակվել են տարբեր հովանավոր և նվիրատու կառույցների, անձանց կողմից: Դժվարությունները հիմնականում կապված են եղել առանձին բնակարաններում բնակեցված արցախցի ընտանիքների կոմունալ ծախսերի և ջեռուցման հետ: Դժվարություններից մեկը մարզի ներսում և մարզից դուրս արցախցի ընտանիքների տեղաշարժի արձանագրումն էր, որը հնարավորություն չի տալիս հստակ ունենալ մարզի պատկերը:
5. Նախկինում չբնակեցված կամ դատարկ տներում ապրող արցախցիները հիմնականում իրենք են լուծել իրենց կոմունալ-կենցաղային խնդիրները: Առանձին ծրագրերով ոմանց տրամադրվել է վառելափայտ, բրեկետ, վառարաններ. էլեկտրական տաքացուցիչներ:
6. Այս պահի դրությամբ որևէ ընտանիք մշտական բնակության խնդրանքով չի դիմել մարզպետարան:

Հարգանքով՝

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ